Հաստատում եմ՝ տնօրեն Ա. Նազարյան

Ստուգված է՝ տնօրենի տեղակալ՝ Հ. Ներսիսյան

ուսուցչի օգնական՝ Լ. Գևորգյան

<<ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի

Ուսուցչի օգնականի 1-ին կիսամյակի հաշվետվություն

2023-2024 ուստարում ուսուցչի օգնական՝ Լիլիթ Գևորգյանի կիսամյակային ամփոփ հաշվետվություն

Ուսումնական տարվա սկզբում անհատական աշխատանք եմ տարել հետևյալ աշակերտների հետ՝

Ալեն Մարգարյանի

Գոռ Բալաչյանի

Կարինե Չիզմեջյանի

Սոնա Աբրահամյանի

Ալեն Մարգարյան - Սովորողը հասնում է սահմանված կարճաժամկետ նպատակներին: Կարողանում է ինքնուրույն կողմնորոշվել իրեն ծանոթ միջավայրում՝տանը և դպրոցում (օրինակ՝կարող է գտնել իր դասարանի տեղը՝եթե ինքը գտնվում է այդ նույն հարկում): Ալենի մոտ ձևավորվել են արդեն պարզ գաղափարները ժամանակի մասին (գիշեր, ցերեկ, լույս , մութ): Շրջակա բնության մեջ ճանաչում և տարբերակում է ծառերը ծաղիկները ,այն կենդանիները ,որոնց հաճախ է հանդիպել առօրյայում (շուն, կատու ,կով, խոզ, ձի): Կարողանում է կատարել համադրման և խմբավորման պարզ աշխատանքներ ըստ ձևի, գույնի: Հաշվում է մինչև 20-ը: Կարողանում է լսել և արձագանքել ուսուցչի հրահանգներին: Կատարում է դանդաղ վազք, վազք արագացումով, հեռացատկ, թիմային խաղերի ժամանակ կարողանում է հաղորդակցվել թիմակիցների հետ: Ալենը դժվարանում է մնալ նստած դիրքում, ձեռքում բռնել և կիրառել համապատասխան գրենական պիտույքը տրված հանձնարարությունները կատարելու համար: Երբեմն նկատվում է հոգնածություն, ինչի պատճառով դժվարանում է ինքնուրույն ավարտել հանձնարարությունը: Կարողությունները առարկաների շրջանակներում չեն համապատասխանում տարիքային զարգացման չափանիշներին:

Դժվարանումէ կատարել մաթեմատիկական գործողություններ հատկապես հանում, երբեմն դուրս է գալիս վանդակներից: Տետրի էջի և տողերի սահմաններում կողմնորոշումը կատարում է ուսուցչի անմիջական ցուցումներով: Երբեմն կարող է նկատվել անիմաստ, կրկնվող և իրավիճակին ոչ համապատասխան խոսք: Ունի վախեր, տագնապայնություն,բարձր ձայներից կարող է փակել ականջները: Ալենը սովորում և ընկալում է տեղեկատվությունը դժվարությամբ, սակայն սիրում է զբաղվել դասին համապատասխան դիդակտիկ և զարգացնող խաղերով:

Գոռ Բալաչյանի - Գոռն ընկալում և ցանկության դեպքում կատարում է պարզ հրահանգներ: Ցանկության դեպքում կարողանում է կենտրոնացնել ուշադրությունը և ավարտին հասցնել պարզ առաջադրանքը: Ճանաչում է թվերը, գույները,

երկրաչափական պատկերները:Ավելի լավ զարգացած է մեխանիկական հիշողությունը: Գիտի անգլերեն մի քանի տառ, հաշվում է, կարողանում է կարդալ բառերը վանկերով և ուսուցչի օգնությամբ: Գիտի ռուսերեն մի քանի տառ : Նկար - քարտերի միջոցով կարողանում է տալ տվյալ առարկայի անվանումը: Կարողանում է ցատկել, կարճ տարածության վազել: Հարցերի միջոցով պատմում է սյուժետային նկարներ:Ըստ տրված նմուշի կարողանում է պատրաստել ապլիկացիա թղթով: Ընտրում է համապատասխան գույները: Խոշոր շարժունակության ոլորտում չունի դժվարություններ: Կողմնորոշվում է իրեն ծանոթ տարածքում: Երեխան գիտի կենցաղային իրերի օգտագործման նշանակությունը: Բարդ բառերը դժվարանում է արտաբերել: Ունի դժվարություններ նոր գիտելիքներ յուրացնելիս և ձեռք բերվածը գործնականում կիրառելիս: Չի կարողանում հաշվել զույգերով: Կարողանում է լուռ լսել երաժշտությունը և կատարել ծափեր ուսուցչի օգնությամբ:Երկրաչափական պատկերներից գիտի շրջանը,քառակուսին, ունի մեծի և փոքրի գաղափարը: Նկար քարտերով առանձնացնում է տարվա եղանակները: Դժվարանում է հիշողության մեջ պահել տեղեկությունները և նոր գիտելիքները: Շփվող չէ, ընկերներ չունի, բակ չի գնում: Լացկան է, երբ չեն կատարում իր ցանկությունները, խռովկան է:

Կարինե Չիզմեջյանի - Կարինեի մոտ ավելի լավ զարգացած է մեխանիկական հիշողությունը: կարողանում է կենցաղային իրերը օգտագործել ըստ նշանակության: Ըստ տրված նմուշի կարողանում է պատրաստել ապլիկացիա թղթով: Ընտրում է համապատասխան գույները: Խոշոր շարժունակության ոլորտում չունի դժվարություններ:

Սոնա Աբրահամյանի Սոնան ինքնուրույն կարողանում է գրել թելադրություն,արտագրություն, կատարում է պարզ թվաբանական գործողություններ: ընկալում է իրեն ուղղված հրահանգները և կատարում դրանք:

Յուրաքանչյուր աշակերտի հետ տարվել է անհատական աշխատանք, աջակցել եմ թեմատիկ, գործնական կիսամյակային գրավոր աշխատանքների ժամանակ: Լրացվել են ուսուցչի և ուսուցչի օգնական համատեղ աշխատանքի թերթիկները և հաստատվել փոխտնօրենի կողմից: Սկսնակ մանկավարժական կադրերին ծանոթացրել ենք ԿԱՊԿՈՒ աշակերտների խնդիրների հետ, ԱՈՒՊ-ների լրացման կարգին: